Օրենսդրական փոփոխություններ

Հարկային գործընթացների պարզեցում և հստակեցում

www.src.am

Ապրանքի վերադարձի դեպքում գործարքի ճշգրտման կանոնակարգում

Ապրանքների վերադարձի դեպքում նախատեսվում է գործարքների ճշգրտման հնարավորություն՝ առանց հետվաճառք ձևակերպելու: Այն թույլ կտա վերադարձն իրականացնել նույն գործարքի շրջանակում՝ դարձնելով գործընթացն ավելի պարզ և տրամաբանական, իսկ հարկային հաշվետվությունները՝ ավելի ճշգրիտ:

Ներկայում, որոշ դեպքերում (օրինակ՝ պիտանիության ժամկետ չունեցող ապրանքների դեպքում), վերադարձը ձևակերպվում է որպես հետվաճառք, ինչը բարդացնում է գործընթացը և չի արտացոլում իրական պատկերը: Առաջարկվող փոփոխությամբ նշված խնդիրը կվերացվի:

ՀԴՄ կտրոնով վերադարձի դեպքում հարկերի հաշվարկի պարզեցում

ՀԴՄ կտրոնով կատարված գնումների վերադարձի դեպքում՝ ԱԱՀ-ի ճշգրտումները կարտացոլվեն վերադարձի ամսվա հարկային հաշվարկներում, այլ ոչ թե վաճառքի ամսվա հարկային հաշվարկներում: Ներկայում դրանք ներառվում են վաճառքի հաշվետու ամսում, ինչը պահանջում է վերանայել արդեն ներկայացված հաշվարկները՝ առաջացնելով բարդ և ժամանակատար գործընթաց:

Նոր կարգավորմամբ՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի նվազումը կհաշվառվի անմիջապես վերադարձի հաշվետու ամսում, ինչի շնորհիվ հարկային հաշվարկների կազմման ու հարկային մարմին ներկայացման գործընթացը կդառնա ավելի պարզ և հեշտ կառավարելի, ինչպես նաև կկրճատվեն հարկային հաշվարկների ճշտման դեպքերը:

Անավարտ բազմաբնակարան շենքերի օտարման դեպքում հարկման բազայի հաշվարկի վերանայում

Վերանայվում է շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված անավարտ (կիսակառույց) բազմաբնակարան շենքերի օտարման դեպքում հարկման բազայի որոշման կանոնները: Առաջարկվում է ԱԱՀ-ի և շահութահարկի հարկման բազան հաշվարկելիս չկիրառել կադաստրային արժեքի 80 տոկոսի չափով որոշվող մեծությունը (նվազագույն շեմ) :

Ներկայում հարկման բազայի նվազագույն շեմը որոշելիս հիմք է ընդունվում կառուցվող բազմաբնակարան շենքի ամբողջ կադաստրային արժեքի 80 տոկոսը՝ առանց հաշվի առնելու շինության ավարտվածության աստիճանը, ինչը հանգեցնում է անհամաչափ հարկային բեռի:

ԱԱՀ հաշվառման վերանայման հնարավորություն

Հնարավորություն է տրվում 2022–2025 թթ. ընթացքում ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չներկայացրած տնտեսվարողներին մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը ներկայացնել հայտարարություն, և այդ տարիների համար հաշվառվել որպես ԱԱՀ վճարող: Հայտարարության համար մինչև 2026թ. դեկտեմբերի 21-ը ներառյալ հարկային մարմին պետք է ներկայացնել դիմում:

ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարությունը ներկայացնելու դեպքում կվերահաշվարկվեն հայտարարության չներկայացման հիմքով վարչական ակտերով հաշվարկված հարկային պարտավորությունները, ներառյալ տույժերը և տուգանքները:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ԱԱՀ-ի կանոնների պարզեցում

Պարզեցվում են ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ընկերությունների (Google, Facebook և այլն) ԱԱՀ-ի վճարման կանոնները՝

- ոչ ռեզիդենտ ընկերությունները ԱԱՀ կվճարեն նաև ԱԱՀ չվճարող կազմակերպությունների հետ գործարքների դեպքում՝ բացառությամբ պետության և համայնքների
- ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանը հիմնականում եռամսյակն է, իսկ ԵՏՄ հարթակների միջոցով ֆիզիկական անձանց ապրանքների վաճառքի դեպքում՝ ամիսը,
- ԱԱՀ հաշվետվությունները բոլոր դեպքերում ոչ ռեզիդենտ ընկերությունները կներկայացնեն պարզեցված կարգով՝ e-VAT համակարգով:

Փոփոխությունների նպատակն է պարզեցնել ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից ԱԱՀ-ի պարտավորությունների կատարման գործընթացը:

Կաթնամթերքի կորուստների թույլատրելի նորմայի բարձրացում

Բարձրացվում է դրոշմավորման ենթակա կաթնամթերքի կորուստների թույլատրելի նորման՝ 1%-ից դառնալով 2%: Պատճառն այն է, որ դրոշմավորման ենթակա կաթնամթերքի որակական կորուստը (օրինակ ժամկետի սպառման արդյունքում) տարեկան կտրվածքով ավելի մեծ կարող է լինել, քան համախառն եկամտի 1 տոկոսը:

Փոփոխությունն արտադրողներին թույլ կտա կորուստները կառավարել արդյունավետ և նվազեցնել արտադրական գործընթացում առաջացող ֆինանսական ռիսկերը: